

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

## 2014-2018 ՀՆԳԱՄԵԱՅ ԶԵԿՈՅՑ

### ՆԵՐԱԾԱԿԱՆ

Սոյն զեկոյցը կը ներկայացնէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքին 2014-էն 2018-ի կրթանպաստներու հնգամեայ ծրագիրին արդիւնքները: Կրթանպաստի ընդհանուր ծրագիրին մաս կը կազմեն հետեւեալ եօթ կրթանպաստի ծրագիրները՝

1. Հայ ուսանողներու գերազանցութեան կրթանպաստներ (Global Excellence Scholarship)
2. Հայագիտութեան կրթանպաստներ
  - 2.1. Հայագիտութեան կարճաժամկէտ հետազօտական դրամաշնորհներ
3. Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստներ
4. Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար
5. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ
6. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ
7. Արտակարգ կրթանպաստներ

## ՆԱԽԱՀԱՇԻԻՒՅԱՏԿԱՑՈՒՄ

### 1. Հայ ուսանողներու գերազանցութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը փայլուն հայ ուսանողներու համար նախատեսուած է, որոնք դոկտորական մակարդակի ուսում կը ստանան աշխարհի ճանչցուած համալսարաններու մէջ. 2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը 183 դիմում ստացաւ: Դիմողներուն 61%-ը կին էր իսկ 39%-ը տղամարդ. 53%-ը Հայաստանէն էր, 9%-ը Լիբանանէն, 7%-ը ԱՄՆ-էն եւ 6%-ը Թուրքիայէն:

27 կրթանպաստ յատկացուեցաւ, ընդհանուր **692,946 Եւրօ** գումարի, 1-էն 3 տարուայ կտրուածքով:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Գերազանցութեան կրթանպաստ՝ քանակ						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նոր կրթանպաստներ	6	6	4	4	7	27
Գերազանցութեան կրթանպաստ՝ յատկացուած գումար						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նոր կրթանպաստներ	111,000	101,306	49,682	36,000	70,000	367988
Նորոգուած կրթանպաստներ	0	72,000	101,210	111,248	40,500	324958
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>111,000</b>	<b>173,306</b>	<b>150,892</b>	<b>147,248</b>	<b>110,500</b>	<b>692,946</b>

2019-2023 նոր հնգամեայ ծրագիրին պարունակին մէջ «Հայ ուսանողներու գերազանցութեան կրթանպաստ»-ը կասեցուեցաւ, շեշտը Հայագիտութեան ոլորտին վրայ դնելու նպատակով:

## 2. Հայագիտության կրթնապաստներ

Կրթնապաստի այս ծրագիրը բաց է Հայագիտության մեջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազոտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը 387 դիմում ստացաւ. դիմողներուն 65%-ը կին էր իսկ 35%-ը տղամարդ. 50%-ը Հայաստանէն էր, 13%-ը ԱՄՆ-էն եւ 9%-ը Թուրքիայէն:

58 կրթնապաստ յատկացուեցաւ, ընդհանուր 1,629,642 Եւրօ գումարի. իւրաքանչիւր նպաստ ըլլալով 3,000-էն 22,000 Եւրոյի միջեւ, առաւելագոյնը երեք տարուան համար: Ստացողներուն 60%-ը կին էր իսկ 40%-ը տղամարդ: 31%-ը Հայաստանէն էր, 19%-ը Թուրքիայէն եւ 17%-ը ԱՄՆ-էն: 66%-ը PhD-ի համար իսկ 21%-ը Master's-ի:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Հայագիտութեան կրթնապաստներ՝ քանակ						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նոր կրթնապաստներ	14	13	9	10	12	<b>58</b>
Հայագիտութեան կրթնապաստներ՝ յատկացուած գումար						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նոր կրթնապաստներ	243,000	158,403	40,500	121,450	152,000	715,353
Նորոգուած կրթնապաստներ	211,200	225,520	215,198	119,000	139,340	910,258
ԸՆԴԱՄԵՆԸ	456,214	383,923	255,698	242,467	291,340	<b>1,629,642</b>

Նոյն ժամանակահատուածին, Բաժանմունքը նպաստ յատկացուց նաեւ Հայագիտական երկու հետազոտական նախագիծի՝ 49,712 Եւրօ գումարով:

- 2014-ին, Չինաստանի հայերու մասին հետազոտական նախագիծին:
- 2017-ին, Հայաստանի եւ հայերու ուղղուած ժամանակակից հետազոտական նախագիծին (24 հետազոտողներու). համահովանաւորն էր՝ Institute of Armenian Studies of the University of Southern California:

## 2.1 Հայագիտութեան կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը Հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու առիթը կընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ աւելին: Տուեալ հնգամեայ ծրագիրին ընթացքին յատկացուած առաւելագոյն գումարը չգերազանցեց 5,000 Եւրօն կամ Տոլարը:

2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը ստացաւ 361 դիմում 33 տարբեր երկիրներէ. դիմողներուն 57%-ը կին էր իսկ 43%-ը տղամարդ. 23%-ը Հայաստանէն էր, 16%-ը ԱՄՆ-էն եւ 16%-ը Թուրքիայէն:

197 կրթանպաստ յատկացուեցաւ, որ կը համապատասխանէ ընդհանուր դիմումներուն 55%-ին:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Հայագիտութեան կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ՝ քանակ					
2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
17	43	31	46	60	<b>197</b>
Հայագիտութեան կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ՝ յատկացուած գումար (Եւրօ)					
2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
32,847	69,622	75,155	89,097	122,597	<b>389,318</b>

Ասոնց առընթեր, 2016-էն սկսեալ, երկու թիրախաւորուած նպաստի ծրագիր մշակուեցաւ՝

1. Լոնտոնի եւ Պուտափեշտի մէջ արեւմտահայերէնի ամառնային խտացեալ դասընթացքին համար, որուն պարունակին մէջ 29 ուսանող նպաստ ստացաւ:

Արեւմտահայերէնի ամառնային դասընթացք	2016	2017	2018	Ընդամենը
Ուսանողներու քանակ	8	5	16	<b>29</b>
Յատկացուած գումար (Եւրօ)	10,834	6,435	19,702	<b>36,971</b>

2. Միամեայ Հայագիտութեան եւ պատմութեան դասընթացք Պուտափեշտի Pázmány Péter կաթողիկէ համալսարանին մէջ, որուն համար ինը ուսանող նպաստ ստացաւ:

Pázmány Péter Հայագիտութեան դասընթացք	2017	2018	Ընդամենը
Ուսանողներու քանակ	4	5	<b>9</b>
Յատկացուած գումար (Եւրօ)	21,495	25,000	<b>46,495</b>

### 3. Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստներ

Այս կրթաթոշակի ծրագիրը մշակուած է որեւէ տեղ արեւմտահայերէնով դասաւանդող մանկավարժներու պատրաստումին կամ վերապատրաստումին համար:

2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը ստացաւ հինգ դիմում եւ բոլոր դիմումները ընդունուեցան. երեքը կին էր իսկ երկուքը տղամարդ: Մէկը Գանատայէն, մէկը Լիբանանէն, մէկը ԱՄՆ-էն եւ երկուքը Թուրքիայէն:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստ՝ քանակ						
	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Նոր կրթանպաստներ	0	1	0	2	3	6
Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստ՝ յատկացուած գումար (Եւրօ)						
	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Նոր կրթանպաստներ	0	4,000	0	9,556	10,140	23,696

2019-2023 նոր հնգամեայ ծրագիրին պարունակին մէջ «Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստի ծրագիրը»-ը կասեցուեցաւ, շեշտը դնելու ուսուցիչներու վերապատրաստումի այլ նախագիծերու վրայ:

#### 4. Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու եւ հետազօտողներու առիթը կը ընծայէ կարճաժամկէտ դասընթացքներու եւ վրապատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

Բաժանմունքը ստացաւ 1057 դիմում. 71%-ը կին էր իսկ 29%-ը տղամարդ: Դիմողներուն 96%-ը Հայաստանէն էր, իսկ 4%-ը 21 այլ երկիրներէ:

379 ուսանող եւ հետազօտող նպաստ ստացաւ ընդհանուր **405,106 Եւրօ** գումարի: Նպաստ ստացողներուն 68%-ը կին էր իսկ 32%-ը տղամարդ եւ 98%-ը Հայաստանէն էր:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ՝ քանակ					
2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
63	88	66	77	85	<b>379</b>
Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ՝ յատկացուած գումար (Եւրօ)					
2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
76,080	92,296	63,992	85,103	87,635	<b>405,106</b>

## 5. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը զարգացող երկիրներու մէջ ապրող հայ ուսանողներու առիթը կը ընծայէ համալսարանական կրթութիւն ստանալու՝ նախ-ընթացաւարտ մակարդակի համար:

2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը ստացաւ 1061 դիմում 39 տարբեր երկիրներէ, առաւելաբար Լիբանանէն, Հայաստանէն, Թուրքիայէն եւ Միջին Արեւելեան երկիրներէն: Դիմողներուն 55%-ը կին էր իսկ 45%-ը տղամարդ: 31%-ը Լիբանանէն եւ Միջին Արեւելքէն էր, 27%-ը Հայաստանէն, 13%-ը Թուրքիայէն եւ 29%-ը 36 այլ երկիրներէ:

**169** (այսինքն դիմումներուն 16%-ը) հոգի կրթանպաստ ստացաւ: Նպաստ ստացողներուն 64%-ը կին էր իսկ 36%-ը տղամարդ: 64%-ը Լիբանանէն եւ Միջին Արեւելքէն էր, 17%-ը Թուրքիայէն, 8%-ը Հայաստանէն եւ 11%-ը տասը այլ երկիրներէ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ՝ քանակ						
	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Նոր կրթանպաստներ	43	43	20	30	33	<b>169</b>
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ՝ յատկացուած գումար (Եւրօ)						
	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Նոր կրթանպաստներ	123,943	101,000	44,045	78,359	87,437	434,784
Նորոգուած կրթանպաստներ	18,525	90,750	134,750	100,829	90,412	435,266
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>142,468</b>	<b>191,750</b>	<b>178,795</b>	<b>179,188</b>	<b>177,849</b>	<b>870,050</b>

Կրթաթոշակի այս ծրագիրին առընթեր, նպաստներ յատկացուեցան նաեւ հետեւեալ երեք ծրագիրներուն մասնակցող ուսանողներու՝

- (i) 2016-ին, Բաժանմունքը Լիբանանի մէջ «Յատուկ կրթութիւն» ուսանելու համար կրթաթոշակ սկսաւ յատկացնել: 2016-ին, 2017-ին եւ 2018-ին Բաժանմունքը **եօթը** նպաստ յատկացուց Հայկազեան Համալսարանին մէջ ուսանողներու: Յատկացուած ընդհանուր գումարը կազմեց՝ **94,042 Եւրօ**:
- (ii) **22,000 Եւրոյի** նպաստ յատկացուեցաւ Cité Universitaire de Paris, Maison des étudiants arméniens-ի հայ ուսանողներու (Master's):
- (iii) **Չորս** կրթանպաստ յատկացուեցաւ ուսանողներու որ մասնակցեին երկու շաբաթուայ կրթական ղեկավարութեան ծրագրի մը Պելճիբայի մէջ (Altemus):

## 6. Փորձուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ

2014-2018-ի միջեւ Բաժանմունքը ստացաւ 47 դիմում. դիմողներուն 66%-ը կին էր իսկ 34%-ը տղամարդ, 57%-ը Հայաստանէն էր, 19%-ը Փորձուկալէն եւ 15%-ը Թուրքիայէն:



**44** ուսանող կրթանպաստ ստացաւ (որ կը կազմէ դիմումներուն 94%-ը). ընդհանուր գումարը կազմեց՝ **223,400 Եւրօ**: Նպաստ ստացողներուն 64%-ը կին էր իսկ 36%-ը տղամարդ: 59%-ը Հայաստանէն էր, 18%-ը Փորթուկալէն եւ 16%-ը Թուրքիայէն:

Հետեւեալ աղիւսակները կը ներկայացնեն յատկացուած կրթաթոշակներու քանակը եւ գումարները 2014-2018-ի համար՝

Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ՝ քանակ						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	7	6	5	9	6	<b>33</b>
Master's, PhD, Post Doc – նոր կրթանպաստներ	2	0	1	4	4	<b>11</b>
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	0	5	5	0	1	
PhD եւ Post Doc – նորոգուած կրթանպաստներ	0	1	1	0	0	
	9	12	12	13	11	<b>44</b>

Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ՝ յատկացուած գումար (Եւրօ)						
	2014	2015	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	27,287	11,300	5,194	18,650	23,394	<b>85,825</b>
Master's, PhD, Post Doc – նոր կրթանպաստներ	19,500	0	2,500	24,350	22,000	<b>68,350</b>
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	0	18,500	21,475	0	1,250	41,225
PhD եւ Post Doc – նորոգուած կրթանպաստներ	0	14,000	14,000	0	0	28,000
ԸՆԴԱՄԵՆԸ	46,787	43,800	43,169	43,000	46,644	<b>223,400</b>

## 7. Արտակարգ կրթանպաստներ

Հայկական Համայնքներու Բաժանմունքը համահովանաւորեց արտակարգ կրթանպաստի ծրագիր մը ուղղուած փախստական ուսանողներու որոնք Միջին Արեւելքէն զացած են Հայաստան ուսանելու: Ծրագիրին համահովանաւորներն են՝ ՀԲԸՄ-ը, Սբ. Սարգիս հոգաբարձութիւնը եւ Հայաստանի Սփիւռքի նախարարութիւնը: 2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը այս ծրագիրին յատկացուց **531,318 Եւրօ**:

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ

2014-էն 2018-ի միջեւ Բաժանմունքը ստացաւ 3102 դիմում 54 տարբեր երկիրներէ: Դիմողներուն 62%-ը կին էր իսկ 38%-ը տղամարդ: 57%-ը Հայաստանէն էր (36%, եթէ Հայաստանի համար նախատեսուած «Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար» ծրագիրը զանց առնուի), 13%-ը Լիբանանէն եւ Միջին Արեւելքէն, 7%-ը Թուրքիայէն, 7%-ը ԱՄՆ-էն եւ 2%-ը Ֆրանսայէն. իսկ մնացեալ 14%-ը 49 տարբեր երկիրներէ:

Այս 3102 դիմումէն, Բաժանմունքը **880** կրթանպաստ յատկացուց (որ դիմումներուն 28%-ը կը կազմէ) 33 երկիրներէ ուսանողներու, որուն ընդհանուր գումարը կը կազմէ՝ **4,234,158 Եւրօ**:

Նպաստ ստացողներուն 64%-ը կին էր իսկ 36%-ը տղամարդ. անոնց 56%-ը Հայաստանէն էր (24%, եթէ Հայաստանի համար նախատեսուած «Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար» ծրագիրը զանց առնուի), 14%-ը Լիբանանէն եւ Միջին Արեւելքէն, 9%-ը Թուրքիայէն, 6%-ը ԱՄՆ-էն. իսկ մնացեալ 15%-ը 29 տարբեր երկիրներէ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ ընդհանուր պատկերը՝



Կրթանպաստներ	Դիմումներ			Նպաստ ստացողներ			
	Ընդամենը	Է.	Ա.	Ընդամենը	Է.	Ա.	Գումար (Ելք)
1. Հայ ուսանողներու գերազանցության կրթանպաստ	183	112	71	27	18	9	692,946
2. Հայագիտության կրթանպաստներ	387	253	134	58	35	23	1,629,642
2.1. Հայագիտության կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ	361	205	156	197	114	83	389,318
3. Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստ + մէկ արտակարգ կնթանպաստ	6	3	2	5	3	2	23,696
4. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ	1,057	751	306	379	258	121	405,106
5. Նախ-ընթացաւարտության կրթանպաստներ	1,061	582	479	169	109	60	870,050
6. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ	47	31	16	44	28	16	223,400
	<b>3,102</b>	1937	1165	<b>880</b>	565	315	<b>4,234,158</b>

Ասոնց առընթեր, տարբեր նպաստներ յատկացուած են հինգ տարիներուն ընթացքին. հետեւեալ աղիւսակը կ'ամփոփէ այդ յատկացումները, որ ընդհանուր **782,238 Ելք** կը կազմէ:

Նախագիծեր	Հետազոտողներու թիւ					Ընդհանուր գումարներ	
	2014	2015	2016	2017	2018	Հետազոտողներ	Գումար (Եւրօ)
1. Չինաստանի հայերու հետազոտութիւն	2					2	22,000
2. University Southern California (Institute of Armenian studies) Հայաստանի եւ հայերու ուղղուած ժամանակակից հետազոտական նախագիծ				24		24	27,712
2.1. Արեւմտահայերէնի ամառնային դասընթացք			8	5	16	29	36,971
2.1. Pázmány Péter Հայագիտական դասընթացք				4	5	9	46,495
5. Յատուկ կրթութեան կրթանպաստ			7			7	94,042
5. Cité Universitaire-ի կրթանպաստ				4		4	22,000
6. Altemus Leadership Programme			2	2		4	1,700
7. Արտակարգ կրթանպաստ փախստական ուսանողներու համար						*	531,318
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>						<b>79</b>	<b>782,238</b>

\* 2014-ի եւ 2017-ի միջեւ 1015 ուսանող նպաստ ստացաւ այս ծրագիրին պարունակին մէջ:

2014-էն 2018-ի կրթանպաստի հնգամեայ ծրագիրին ընթացքին Հայկական Բաժանմունքը **5,016,396 Եւրօ** յատկացուց **959** համալսարանական ուսանողներու եւ հետազոտողներու (չհաշուած 1015 ուսանողները որոնք արտակարգ կրթանպաստ ստացան): Յատկացուած գումարը կը կազմէ Բաժանմունքին ընդհանուր պիւտճէին մօտ մէկ երրորդը: Կրթանպաստներու ծրագիրը Բաժանմունքին ամենէն հին ծրագիրն է որ կը գործէ 1956 թուականէն ի վեր: